

ՆՈՎՆԱՆՆԵՍ ԲԵՅԼԵՐՅԱՆ

«ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԱԸ» ԱՌԱԿԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԿԱՐԳՈՒՄ

Աստվածաշնչյան առակները խմբավորվում են Նին Կրակարանի Առակաց գրքում եւ Նոր Կրակարանում, առավելապես՝ Մաւրթեոսի եւ Ղուկասի Ավետարաններում: Առակաց գիրքը հայ միջնադարյան մաւրենագրոյթյան մեջ մեկնել են Նամամ Արեւելցի¹ եւ Ներսես Լամբրոնացի², իսկ Նոր Կրակարանի առակների վերաբերյալ առավելապես շրջանառվել է Պերրոս Բերդումյանի «Աղբիւր բացեալ»³ աշխատւոյթունը:

Առակը, իբրեւ կանոն, երկշերտ է, ունի ոչ միայն մակերեսային, իրավիճակային պարզոյթամբ բովանդակւոյթուն, այլեւ՝ խորքային ենթաշերտեր, որոնք տարբերվում, երբեմն նույնիսկ հակասում են արտաքին, ակնհայտ իմաստին, որը հաճախ բացասական խտացումով է. այդ ենթաշերտերի ընկալումը հնարավոր է միայն նյութին սրելոծագործարար մոտենալու պարագային:

Ավետարանական առակները մեկնելու եւ ընկալելու համար շատ կարեւոր է դրվագները չառանձնացնել ընդհանուր շարակարգից: Մեկնիչների համար առաջնային կարեւորւոյթուն ունի ոչ միայն առակների խրատական եւ այլաբանական շերտերի բացահայտումը, այլ նաեւ հանգամանալից անդրադարձը, թե Բրիստոս ինչ պայմաններում պարամեց տվյալ առակը, ում էր ուղղված Նրա խոսքը՝ աշակերտներին, փարիսեցիներին, թե՛ հավաքվածներին: Այս հետեւողականւոյթունը ենթադրում է առակի համակցված ըմբռնում, բնագիրը խեղաթյուրող դրվագային մեկնւոյթյան մերժում: Այսպես, եթե «Անիրավ տնտեսը» առակից հնարավոր է «կորզել» ասացվածային (աֆորիստիկ) որեւէ միտք, ինչպես օրինակ՝ «Արարեք ձեզ բարեկամս ի մատնայեւ անիրաււոյթեան» (Ղուկ. ԺԶ. 9), ապա միայն ասելիքը մասնաւորելու, թերի դարձնելու պարագայում:

1 Տեն Նամամ Արեւելցի, Մեկնւոյթիւն առակաց, աշխ.՝ Մխիթար քին. Մարիբեկյանի, Երեւան, 1994, էջ 161-252:

2 Մաւրթոցի անվան Մաւրենադարան (այսուհետ՝ ՄՄ) ձեռ. ՏՊ 4211, թ. 1ա-286ա:

3 Տեն Պերրոս Բերդումյան, Աղբիւր բացեալ (Աւետարանական առակների մեկնւոյթիւն), Ս. Էջմիածին, 2008, էջ 349:

«Անիրավ ւրնւրեալ», թերեւս, նորկրակարանյան բարդ առակներից է: Դարերի ընթացքում դրա թերի ընկալումը բազում վեճերի և թյուրըմբռումների առիթ է հանդիսացել: Այն կարելի է դասել Նոր Կրակարանի դժվարմեկնելի հալածվածների շարքում, հետևաբար առակը հարկավոր է դիտարկել քրիստոնեական վարդապետության շարակարգում. չէ՞ որ արտաքին պայմանությունը ւրնւրեալի մանր հանցանքների մասին է. նա կեղծում էր փրոջ մուրհակները, ինչքը ոչինչ դարձնում ի շահ իրեն, այսինքն՝ փրոջ կարողությունը ոչ միայն չէր ավելացնում, այլև վատնում էր... Դրան հաջորդում է առակի անսպասելի հանգուցալուծումը. ընկալման բարդությունը հենց այն է, որ ւրերը ոչ միայն չի պարծում ւրնւրեալին, այլև գովաբանում է նրան:

Ավերարանական որևէ առակ մեկնելու համար հարկավոր է նախ զարդոյնքով դրա խորհրդարանական կառուցվածքը և հարակեցնել, թե ինչ հարցեր են ծագում սուրբգրային վերոնշյալ հարվածի ընթերցման ժամանակ: Նայ Եկեղեցու նշանավոր սուրբ, ԺԴ. դ. վարդապետ Գրիգոր Տաթևացին այս առակում նկարագրվող «ւրունը» մասնավորում է այսպես. «Տեսցուք զառաջին գլուխն, թե քանի՞ են ւրունք, և ւրնւրեալ ի նոսա: Ասեմք թե՛ Զ. եղանակաւ ասին ւրունք Աստուծոյ: Առաջին ւրուն՝ իմանի երկինքն, և ի մընալեացն աշխարհ. ըստ այնմ՝ «Իմաստութիւն շինեաց իւր ւրուն» (Առակ. ԻԴ. 3), իսկ ւրնւրեալ ի նմա ամենայն դասք հրեշտակացն. «զի պաշտօնեայք են, և արարօղք կամաց նորա, որպէս ասէ մարգարէն»⁴:

«Տան» այլասացությունը գրեթե նույն կերպ է բացատրում նաև Ս. Գրիգոր Տաթևացու աշակերտ Մարթեոս Ջուղայեցին⁵. «Արդ, նախ «ւրուն» կոչի երկինքն, այսինքն՝ իմանալի աշխարհը, ըստ այնմ՝ «Իմաստութեամբ շինեաց իւր ւրուն» (Առակ. ԻԴ. 3): Իսկ «ւրնւրեալ» ի նմա՝ դասս հրեշտակաց, ըստ այնմ՝ «Պաշտօնեայք և հոգիք հարկատրք են, որ առաքինի սպասատրութիւն...» (հմմտ. Եբր. Ա. 13)»⁶:

Նայ մեկնողական գրականության մեջ, հարկապես Տաթևի դպրոցում հաճախ են օգտագործել հարցուպատասխանի (հուն.՝ *katechesis*) սկզբունքը՝ որոշակիացնելով, թե ինչ հարցեր են ծագել այս կամ այն դրվագն ընթերցելիս. «Արդ, վասն առակի ւրնւրեալն՝ չորս ինչ գիտելի է: Նախ թե ո՞րքանաբար ասին ւրունք՝ և ւրնւրեալ ի նմա: Երկրորդ՝ թե ո՞րպէս ամբաստանի և կոչի: Երրորդ՝ թե զի՞նչ է ձեռն

⁴ Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հարոր, Կոստանդնուպոլիս, 1740, էջ 393 (այսուհետ՝ Գրիգոր Տաթևացի, Ձմեռան):

⁵ Մարթեոս Ջուղայեցին ԺԴ. դարավերջին և ԺԵ. դարի առաջին վասնամյակներին ապրած հայ նշանավոր ասվածաբաններից է, որի մասին տեղեկություններ են հասել հենց իր թողած մատենագրական ժառանգության միջոցով: Նրա անունը կապվում է Տաթևի դպրոցի ոսկե շրջանի հետ: Նրա երկերն ընդօրինակվել են ոչ միայն Նախաստանում, այլ նաև հայաշատ գաղութներում. րենս Լևոն Խաչիկյան, Մարթեոս Ջուղայեցու կենսն ու մատենագիտութիւնը, հյր. Ա., Երևան, 1995, էջ 247-272:

⁶ Մարթեոս Ջուղայեցի, Մեկնութիւն Աւերարանին Ղուկասու, ՄՄ ձեռ. 2519, թ. 48բ:

և ցորեանն: Չորրորդ՝ վասն է՞ր գովի փնտրեան անիրաւութեան»⁷: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ «փունը» կարելի է ընկալել եւ որպէս համայն աշխարհի, եւ որպէս մարդու ներաշխարհի այլասացություն. «Տուն կոչի աշխարհս զգալի. ըստ որում՝ «Լուցանէ զճրագ մարմնոյն՝ եւ ածէ առ ի փան աշխարհի», իսկ փնտրեան ի սմա մարդկայինս բնութիւն, զոր իշխան եւ Տէր կացոյց ամենայնի. «Եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ուրից նորա. զխաշն եւ զարջառն եւ զայլն»⁸, ինչպէս նաեւ՝ որոշակի առարկայական, շոշափելի մի երեւոյթ. «...փուն կոչի հինն Սիօն եւ փաճարն Սողոմոնի. ըստ որում՝ «Տուն իմ փուն աղօթից կոչեացի. եւ դուք արարիք զդա այլս առազակաց, եւ փնտրեսք հին օրինաց առաջնորդք եւ քահանայապետք ի նմա»⁹: Այսպիսով, նկատելի է, որ մեկնիչի համար ոչ միայն չկա երկրորդական դրվագ, այլեւ՝ պարահական բառ: Ալեքսանդրյան մեկնողական դպրոցի սկզբունքներին էր բազմաշերտ քննությունը՝ սուրբգրային յուրաքանչյուր բառի առանձնակի կարեւորմամբ. էական էր ոչ միայն նշյալ բառի շարակարգային բացաւորությունը, այլ նաեւ, թե այն ինչ իմաստներ, շերտեր, հարկություններ եւ բնորոշումներ ունենալ¹⁰:

«Անիրավ փնտրեսք» առակը քրիստոնեական վարդապետության մեջ խիստ կարեւոր է. փարաբնոյթ այլաբանությունները երբեմն «փրկօղակի» նման ամբողջացնում են բոլոր կարծիքները: Պահքի շրջանում ընթերցվող մեկ այլ՝ «Անմիտ մեծաբան» առակը (Ղուկ. ԺԲ. 16-21) մեկնելիս Իգնատիոս Սելեուսեցին¹¹ գրում է. «Դարձեալ են, զորս մեծացոյց, եւ նոքա յուսացան ի մեծութիւնս եւ մոռացան, թէ է Աստուած, որ մեծացուցանէ եւ աղքատացուցանէ: Եւ այնքան յարացեալ, հարան ի սէր ընչիցն, մինչեւ խաւարեալք յախարիցն ցանկութեանց, անյոյս եղեն յաստուածային փառացն եւ ի մեծութենէ անփի, որ արդարոցն պահեալ կան յերկինս»¹²:

«Անիրավ փնտրեսք» այն առակներից է, ուր Քրիստոս խոսում է երկրային հարստության մասին՝ Աստուծոյ եւ մարդու հարաբերության ակնարկով: Առակում առաջնայինը նյութեղենից ազատ լինելու, ունեցվածքից հեշտությամբ բաժանվելու խրատն է, քանի որ մարդ չպետք է կառչի եւ իրեն փրկեալ համարի մի բանի, որը

7 Գրիգոր Տաթևացի, Չմեռան, էջ 393:

8 Անդ, էջ 394:

9 Անդ:

10 Ս. Գրիգոր Տաթևացին անգամ ավերարանական ամբողջական մեջբերումներով ցի ծանրաբեռնում բնագիրը: Պարզաբանելով, թե որն է «մեծաբնությունը», նա գրում է. «Նախ պարտ է գիտել՝ զի բազում իրօք զանազանի մեծութիւն մարդոյ: Նախ զի՝ մարդոյս մեծութիւն փալով է սրացեալ, իսկ Աստուծոյ մեծութիւն՝ բնութեամբ եւ ոչ յայլմէ»: Այնուհետեւ, ինչպէս հաստատ է Ս. Գրիգոր Տաթևացու ոճին, փայլաւ է այդ փարբերության բացաւորությունը. «Աստուծոյ մեծութիւն անսկիզբն է եւ անվախճան, իսկ մարդոյս՝ սկսեալ եւ վախճանաւոր. զի էր երբեմն՝ որ ոչ ունէր. եւ եղիցի երբեմն զի ոչ լիցի», կամ՝ «Աստուծոյ մեծութիւն միշտ երանութիւն է, իսկ մարդոյս՝ երբեմն թշուառութիւն». «Չմեռան», էջ 426:

11 «Գրիգոր Կաթողիկոսի Պապականոյ եւ Ներսէսի Շնորհալոյ եւ Սարգիս վարդապետին աշակերտներից էր Իգնատիոս, որ փառօք իր ուսումնասիրական ընթացքը կատարելով Կարմիր վանքին մէջ, Սեւա լերան Շափիր անապատը կամ վանքը առանձնացաւ». Կրէն **Գարեգին Զարբհանալեան**, Պապմութիւն հայերէն դպրութեանց, հր. Ա., Վենետիկ, 1865, էջ 520-1:

12 Իգնատիոս Սելեուսեցի, Մեկնություն Ղուկասու Անարարանի, Կ. Պոլիս, 1824, էջ 211:

Տերն է նրան շնորհել. «Դարձեալ, զի երանեաց զաղքապութիւնն եւ արհամարհեաց զմեծութիւնն՝ ասելով. «Վա՛յ ձեզ, մեծաբանց[ի]» (Ղուկ. Զ. 24), վասն որոյ ասացեալսն իւր հաւաքարմացուցէ յեղեղոց իրաց մեծաբամբն եւ Ղազարոյ»¹³: «Անիրավ ւրնրեսի» եւ «Աղքատ Ղազարոսի» առակների զուգադրումը մեկնողական քարոզիչության մեջ պարահական չէ. սա նկատելի է նաև Նայոց ճաշոց ծիսամարյանում¹⁴:

Իգնարիոս Սելեռնեցին «Անիրավ ւրնրեսի» մեկնությունն սկսում է «Կորած ոչխարի», «Կորած դրամի» եւ «Անառակ որդու» առակների շարակարգում. սա պայմանավորված չէ միայն ավերարանական ժամանակագրությամբ¹⁵: Մեր մեկնիչները ոչ միայն հազվադեպ են նախորդ երեք առակները շաղկապում «Անիրավ ւրնրեսի» հետ, այլ ընդհակառակը, շեշտում են, որ թեև Քրիստոս «Անիրավ ւրնրեսի» առակը պարմեց նախորդ երեքի հետ նույն օրը, սակայն իմաստային առումով դրանք միմյանց հետ առնչություն չունեն¹⁶. այդպիսով ընդգծվում է, որ կարևոր է նկատել առակների ուղերձների միմյանց հաջորդող զարգացումը Փրկչի քարոզներում: Իգնարիոս Սելեռնեցին իր մեկնության մեջ ընդգծում է, որ «Կորած ոչխարի», «Դրամի», «Անառակ որդու» առակներով Տերը նախ զարհուրեցնում է մեզ, ապա՝ ցույց փայլա ելքը «Անիրավ ւրնրեսի» առակով. «Արդ, այսպես առեալ է եւ այս առակ յեղեղոց իրաց: Դամեցաւ զարհուրեցուցանել եւ փալ գիւրութիւն այնոցիկ կենացն որք աստի ի բաց վճարեցան: Առ այս պարս է մերձ դնել զառաջին առակացն զբանս այն, որ ցուցաւ կարգ ունել: Առաջին գալ ի խնդիր կորուսեալ ոչխարին եւ դրամին եւ ապա ածեալ լինի իբրեւ զուարակ պարարագեալ ի վերայ անառակ բնութիւնս: Եւ արդ կացուցանէ ւրնրեսս յորոց փրկեաց պարարագան: Յայցսանէ ոմանք արդարութեամբ գնացեալս եւ ոմանք անիրաւութեամբ գորս կոչէ փալ համարս: Եւ յայտսիկ, որ զղջացան, գովեաց»¹⁷:

«Տան» եւ «մեծության» այլաբանություններն այս առակի խորհրդաբանական համակարգի սկիզբն են: Կարևոր է հասկանալ, թե ով է ի վերջո «ւրնրեսը», որն է «ւրնրեսությունը»: Ս. Գրիգոր Տաթևացին գրում է. «Տնրեսն չունի զիր ինչ. այլ ի ւրերունեաց հաւաքացաւ նմա. այսպես եւ մարդս բնութեամբ ոչ ինչ ունի, այլ յԱստուծոյ փութեալ է նմա ամենայն, զոր փութանես ի վերայ երկրի»¹⁸: Ս. Գրիգոր Տա-

13 **Մարթեոս Զուղայեցի**, նշվ. աշխ., թ. 53ա:

14 Տե՛ս «Ճաշոց գիրք Նայասարանեայց Եկեղեցոյ», Վաղարշապատ, 1832, էջ 126:

15 Քրիստոս որոշ առակներ պարմում է հաջորդաբար, որը դառնում է ասելիքի զարգացման յորօրինակ եղանակ:

16 «Ըստ ժամանակին կարգաւ եղան ամենայն բանք առակացս այսոցիկ: Առաջինն ա՛յն. իջանելն ի Նաւրէ եւ գնալ զհեղ մոլորեալ ոչխարին եւ գորամն խնդրել եւ գրանել, յեղ այնորիկ՝ փալ գէնքն՝ ի գենումն վասն անառակին դարձի, զի թեպէր եւ խորհուրդն առ Աբրահամա՛ն ցուցաւ, այլ ելք կարարածի խորհրդոյն պարարագան Քրիստոսի՝ յայրնեցաւ, զի եւ ընդ պարփի բնութեանս մերոյ նախանձաբեկք եղեն հրեշտակք»։ **Իգնարիոս Սելեռնեցի**, նշվ. աշխ., էջ 297-298:

17 Անդ, նշվ. աշխ., էջ 320:

18 **Գրիգոր Տաթևացի**, Զմեռան, էջ 394:

թեւացին նաեւ մերժում է հրեշտակներին «ւրնրես» կարծելու մտայնությունը. ավելարարանական առակի ւրնրեսը մարդ է, քանի որ «վասն հրեշտակացն ոչ պարշաճի, զի նոքա ոչ են անիրաւ, այլ անմեղք են եւ արդարք եւ դժուարաշարժք ի մեղս, կամ՝ ամենեւին անշարժք»¹⁹:

Իգնատիոս Մելեռնեցին «ւրնրես» է անվանում նաեւ Եկեղեցին, որն իր մարմնի բոլոր անդամներով սպասավորության է կանգնած Տիրոջ «ւրան» մեջ, ինչպես վարդապետում են նշանավոր հայրերը. «Արդ իբրեւ այսքան խնամակալութեամբ ժողովեաց եւ արդարացոյց զբնութիւնս մեր, ապա շինէ ւրան գեկեղեցի եւ կացուցանէ ւրնրես յայսմ ւրան ըստ իւրաքանչիւր աստիճան սպասաւորութեան: Եւ ւրնրես է իւրաքանչիւր ոք, եթէ մեծի եւ եթէ փոքու արժանացաւ շնորհի»²⁰: Սա եւս կարեւոր դիպարկում է. բոլոր նրանք, որոնք Աստուծոյ գեթ որեւէ շնորհ են ստացել, արդեն իրենք են ւրնորինում դրանից օգտւելու կամ չօգտւելու «ւրնրեսությունը»:

Որոշ մեկնիչներ «ւրնրեսության» նշանակությունը բացահայտելու համար մեջքերում են Ղուկասի Ավետարանի մեկ այլ համար եւս, ուր Քրիստոս բացատրում է. «Ո՛վ իցէ հաւարարիմ ւրնրես եւ իմաստուն, զոր կացոյց Տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ քալ ի ժամու գկերակուրս» (Ղուկ. ԺԲ. 42)²¹: Հակոբ Նալյանն իր «Կիրակէից» քարոզգրքում «Անիրավ ւրնրեսի» առակի մասին խոսելիս Ղուկասի Ավետարանի այս համարն օգտագործում է իբրեւ բնաբան²²:

Մարթեոս Ջուղայեցու «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու» երկի ԺԶ. ճառը նվիրված է «Անիրավ ւրնրեսի» առակի մեկնությանը, որը բաժանվում է հետևյալ ենթաբաժինների՝ «Քանի՞ են ւրնրես եւ ւրնրեսք», «Աստուած է կարարեալ մեծաւորն», «Յարկութիւն ւրնրեսին», «Պարճառ ելանելոյն», «Ո՛վ են ամբաստանողք», «Հոգւոյ մեղքն ձեթոյ նմանի, իսկ մարմնինը ցորեանի», «Իմաստունագոյն է քան հրեշտակն» եւ «Հրեշտակն որդիք լուսոյ են»²³: «Անիրավ ւրնրեսի» առակում վարդապետության իմաստով հարկապես շար կարեւոր է վերջին ենթամիավորը. «Քանի որ այս աշխարհի որդիներն ավելի ընդունակ են քան լուսի որդիները» (Ղուկ. ԺԶ. 8):

Դավանաբանական իմաստով կարեւոր են հարկապես «Անիրավ ւրնրեսի» առակի վերջին համարները, ուր խոսվում է մարդու բանական իմաստության մասին, որն այս երկրի վրա կարող է գերազանցել անգամ երկնային հրեշտակներին: Այս խոսքերը, անշուշտ, աստվածաբանական մտքի ուշադրությունը պետք է իրենց

¹⁹ Անդ:

²⁰ **Իգնատիոս Մելեռնեցի**, նշվ. աշխ., էջ 298:

²¹ Ս. Գրիգոր Տաթևացին կարգաբերում է թե՛ ւրնրեսի հարկանիշները, թե՛ դրանցից արտաձվող այլաբանությունը. «Զի պարարաստեցէ գկերակուրն ի ժամու, եւ քաջէ յամենայն ժամ ծառայակցացն. նոյնպէս եւ մեզ պարտ է ի ժամու գկերակուրս հոգւոյ պարարաստել, եւ յամենայն ժամու կերակրել զընկերս մեր եւ գիողիս»: **Գրիգոր Տաթևացի**, նշվ. աշխ., էջ 394:

²² Տե՛ս ՄՄ ձեռ. ՏՊ 3322, թ. 44ա:

²³ **Մարթեոս Ջուղայեցի**, նշվ. աշխ., թ. 48բ-52ա:

վրա բեռեռնին, քանի որ Ավերաբանում կարևոր է բառային ցանկացած նրբերանգ. խոսենք նախ հերեյալ համարի գրաբարյան թարգմանության մասին. «Ձի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան գորդիս լուսոյ յագգս իւրեանց» (Ղուկ. ԺԶ. 8)²⁴: Մեծարան՝ իր փնտրեսի գովաբանության մեջ հեգնական ոչինչ չկար: Լսելով փնտրեսի արարքների մասին՝ մեծարունը դրանք համարում է նպատակաւորողված, կանխամրաված: «Անառակ որդու» առակում կրթութի որդին գղջում է՝ ասելով. «Քանի՞ վարձկանք են ի փան հաւր իմոյ հացալից, եւ ես ասար սովամահ կորնչիմ» (Ղուկ. ԺԵ. 17): Նովիան Ոսկերերանն այդ գղջման մեջ նկատում է մարդկային իմաստնությունը. «...զի մարդիկ թեպէր եւ մեղանչեն, բայց փութով գղջան եւ արքատուն եւ ապագաւն, եւ խնդրեն գղարձն եւ առաղեն զանցեալ ժամանակն յանպէս ծախելով, յոյժ գղջան եւ արքատուն եւ խնդրեն գողորմութիւն յԱրարչէն, եւ ընդ խորհելն եւս սկիզբն առնեն, եւ ոչ յապաղեն, որպէս զանառակ որդին, որ ընդ խորհելն եւս սկիզբն արար եւ ասաց. «Յարուցեալ զնացից ամ հայրն իմ եւ ասացից՝ Նայր մեղայ յերինս եւ առաջի բռ...»²⁵:

Ինչ վերաբերում է «լուսի որդիներ» ձեռակերպմանը, այն հանդիպում ենք ինչպէս Նոր (Յովհ. ԺԲ. 36), այնպէս եւ Նին Կրակարանում (Եփ. Ե. 8, Ա. Թեա. Ե. 5): Դավանաբանական առումով այս առանցքային արքահայրությունը Ս. Գրիգոր Տաթևացին հմտորեն առնչակցում է «Անառակ որդու» առակի եղբայրների ազգակցությանը. «Եղբարս կոչէ մարդոյս զիրեշտակացն դասս. զի ի միոյ ծնողէ եւ արարչէ գոյացան եւ եղեն. որպէս յառակս անառակին՝ երեց եւ կրթութի որդիս անուանէ»²⁶: Իսկ հետո թվարկում է փարբերությունները. «Նախ՝ զի նոքա երեց են ժամանակաւ. զի ընդ լուսոյն եւ հրեղէն երկնիցն գոյացան, եւ մարդս կրթութի վեցերորդ աւուրն արարաւ: Երկրորդ՝ նոքա իմացականք են, եւ մարդս՝ բանական: Երրորդ՝ նոքա անմահք, եւ մարդս՝ մահկանացու: Չորրորդ՝ նոքա անմարմինք, եւ մարդս՝ մարմին եւ կրթութի: Նինգերորդ՝ երեց են նոքա, զի միահաղոյն գոյացան եւ կարարեցան թոով, իսկ կրթութի եւ մարդս ծննդեամբք ի միմեանց յապաղելով կարարեալ...»²⁷:

Ժամանակակից մի շարք գիտնականներ դեմ են արքահայրվում առակների չափազանց այլաբանական մեկնությանը²⁸: Սակայն անբնեւի է, որ առանց այլաբանական մոտեցման անհնար է բացահայտել առակների իրական ասելիքը.

24 Օրինակ՝ ռուսերեն փարբերակում. «Ибо сыны века сего *догадливец* сынов света в своём роде», ինչպէս մեր աշխարհաբարում՝ «**ընդունակ**». Կտելի է ունեցել իմաստից մասնակի շեղում: Այնինչ գրաբարը հավաքարքիմ է հունարեն բնագրին՝ «**φρονιμος**», եւ աշխարհի որդիներին կոչում է «**իմաստնագոյնք**»:

25 Նովիան Ոսկերերան, Ճառք, նշխարք ի մեկնութեանց Սուրբ Գրոց, Էջմիածին, 2008, էջ 359:

26 Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հայոր, Կոստանդնուպոլիս, 1741, էջ 579 (այսուհետ՝ **Գրիգոր Տաթևացի**, Ամառան):

27 Անդ:

28 Տե՛ս Jeremias, The Parables of Jesus, New York, 1963. C. H. Dodd, The Parables of Kingdom, New York, 1957:

«Անիրավ քրեական» մեկնությունները սրա վառ օրինակն են: Իրոք, հավաքացյալի համար այն դյուրըմբռնելիներից չէ, անգամ ուսյալներին հաճախ լիովին ընկալելի չի եղել. «Բոլոր մեկնիչները համաձայն են, թե «Տնտեսի» առակը շար ներքին դժուարություններով լեցուն հատրած մըն է, եւ թե շար նուրբ մեկնութեանց պէտք կայ, որպէս զի Յիսուսի բերանով անիրաւ շահը արդարացում չըսուի»²⁹:

Հոռմեական կայսրության մեջ անգամ եղել է ժամանակաշրջան, երբ զկարողանալով այս առակը ճիշտ հասկանալ՝ այն համարել են հերազայում հավելված, Քրիստոսի վարդապետությանը չառնչվող, անբեկան արժանի մի հարված, եւ Հուլիանոս Ուրացող կայսեր կարգադրանքով հարվածը հանվել է ավերարանական ամբողջական բնագրից³⁰: Ու թեւէ կարճ ժամանակ անց այդ սրբապղծությունն ուղղվել է, սակայն ակնհայտ է, որ Փրկչի պարմած որեւէ այլ առակ քրիստոնեական աշխարհում այսքան խնդրահարույց չի եղել:

Անդրադառնալով «Անիրավ քրեական» առակին՝ նշենք, որ միանգամայն անհիմն էին բոլոր այն վարկածները, ըստ որոնց՝ այս հարվածը նորկրականության բնագրին է հավելվել ուշ շրջանում, ինչպէս Բ. Գլադկովն է նկատում. «Եթե Ավերարանի ընթերցման ժամանակ հանդիպող բոլոր խնդրահարույց հարվածները բացաւրենք նախնական բնագրի՝ ձեռքից ձեռք գրվելու ընթացքում խաթարմամբ, ապա ի վերջո կհանգենք Ավերարանի իսկության ժխտմանը, այսինքն՝ կասկածի փակ կղնեք հավաստիությունը մեր ձեռքին եղած ձեռագրերի, որոնք անվանդել են մեզ իրենք՝ առաքյալները»³¹:

Վերջապէս, այս առակի բարոյությունն այն է, որ Փրկիչն այսպէղ բավական ներթաքույց է փոխանցում Իր ուսմունքը: Առակն անհնար է հասկանալ առանց մեկնողական գրականության, ուր այն բացահայտվում է ավերարանական քարոզիչության ամբողջական շարակարգում:

Ոմանք թյուրիմացաբար կարծում են, թե Քրիստոս, բացի «Սերմնացանի» եւ «Որոմների» առակների բացաւրությունից (Մատթ. ԺԳ. 4-23, Մարկ. Դ. 3-25, Լուկ. Ը. 4, Մատթ. ԺԳ. 24-52), որեւէ այլ փոքր իր առակները չի մեկնում: Սա, անշուշտ, մոլորություն է. պարզապէս այդ երկու դրվագում աշակերտները խնդրում են ուսուցից հավելյալ պարզաբանում, մյուս դեպքերում բացաւրությունն ավերարանական ողջ բնագիրն է: Եւ ամենակարեւորը. Ինքը՝ Քրիստոս, իր ասելիքն ամփոփում է մեկնողական կամ խրատական երկու կամ երեք ուղերձներով, որոնք, իբրեւ կանոն, սկսվում են՝ «Եւ ես ձեզ ասում եմ» կամ «Իսկ ես ձեզ ասում եմ» բառերով: «Անիրավ քրեական» առակում այդ ամփոփումներն առավել քան ակներև

29 Մադաքիա արք. Օրմանեան, Համապարում, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 494:

30 Տե՛ս Прот. Серафим Слободский, Новые враги христианства, http://azbyka.ru/dictionary/08/zakon_bozhiy_216-all.shtml:

31 Поместный Синод (священник), Приставник или управитель? <http://www.bogoslov.ru/text/2783808.html>:

են. Ղուկասի Ավետարանի ԺՁ. 8-13 համարներն առակի ամփոփումն են. «Ուստի, որ գայլոցն վարեն՝ զիրն ամենեւին ոչ կարել պահել: Զայս միտ ասի. «Եթէ օտարին չեղէք հաւարարիմ, զձերն ո՞ր րացէ ձեզ» (Ղուկ. ԺՁ. 12)³², ապա մյուս ճշմարտությունը, որ բխում է այս առակից. «Ոչ ոք կարել երկուց րերանց ծառայել. զի եթէ զմին արիցէ, եւ զմեւս սիրէ, կամ զմին մեծարիցէ, եւ զմեւս արհամարհիցէ: Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի» (Ղուկ. ԺՁ. 13):

Նորկրպարանյան վերոնշյալ համարները թերեւս ամենաարժարժված եւ բազմիցս մեկնված հարվածներից են: Սակայն հարկապես ուսանելի է Աբրահամ Ասորապարցոյ³³ հետեւյալ գուգադրումը. «...զի ընդ մեզ ոչ կարեմք րանել գայնուսիկ, վասն զի շունն հետեւի երկու մարդկան, որոյ իցէ ոչ զհրէ, բայց մինչ մարդիկը բաժանին ի միմեանց, յայնժամ շունն հետեւի ի Տեառն իրում»³⁴:

Վերոնշյալ խրատները բացահայտում են «Անիրավ րներսի» առակի՝ «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրատութեան» (Ղուկ. ԺՁ. 9) հարվածի իմաստը:

«Մամոնա» բառն ասորերեն կամ արամերեն պարզապես նշանակում է ունեցվածք, հարստություն³⁵ (մեր օրերում նաեւ՝ դրամ, փող): Եւ ուրեմն ինչո՞ւ ասվեց. «Անիրավ մամոնայից ձեզ բարեկամներ արեք»: Նախ՝ ինչո՞ւ է դրամն անիրավ: Եթե մի շարք հեղինակների մեկնությունները փորձենք ի մի բերել եւ ձեռակերպել, պարճառն այն է, որ փողը՝ «մամոնան», խաբում է մարդուն. այն ապահովության զգացում է րալիս իր րիրոջը, իսկ վրանգի ժամանակ «լքում» նրան: «Անիրավ» է, որովհետեւ հուսախաբ է անում իրեն ձգրողներին³⁶: Նիշենք հարուստի պարմությունը, որը մոլեցել էր Քրիստոսին եւ ասում էր, թե բոլոր պարվիրանները զիւրի, մանկությունից հետեւում է դրանց, իսկ Փրկիչը պարասխանում է. «Եթէ կամիս կարարեալ լինել, երթ վաճառեա՛ զինչս քո եւ րոր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս, եւ եկ զկնի իմ» (Մարթ. ԺԹ. 21): Ըստ Մարթեոս Զուղայեցոյ՝ երկրային հարստությամբ հնարավոր է «զնել» երկնային արքայությունը, սակայն ճանապարհն այդ կարողությունից խոհեմորեն բաժանվելն է, բարեգործությունը. դրամը որքան բաժանում ենք ընչագուրկներին, այնքան ընդունելի ենք դառնում «հավիւրենական հարկերում», ինչպես Մարթեոս Զուղայեցին է գրում. «Եւ դարձեալ՝ րայ Աստուած զինչս մարմնականս, զի նովալ զնեսցեն գարքայութիւնն՝ ըստ այնմ. «Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրատութեան, զի յորժամ պակասեսցի այս, ընդունիցին զձեզ յարկան յաիւրենից» (Ղուկ. ԺՁ. 9): Իսկ այրս այս գոյնական

32 Պերրոս Բերդումեան, Ադրիւր բացեալ, էջ 121:

33 ԺԸ. դարի մարենագիր, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան. աշակերպել է Նովսեփ Տաթեւացուն: Եղել է Զմյուռնիայի եւ Սյունյաց առաջնորդ (1774-1776 թթ.). րեն Ն. Ս. Անասյան, Նայկական մարենագիւրություն, հր. Ա., Երեւան, 1976, էջ 87:

34 «Յաղագս երեք կացութեան մարդոյ ի կեանս, այսինքն՝ ի մահուան եւ յեր մահուան», ՄՄ ձեռ. 2230, 47բ:

35 Տե՛ս «Նոր բառգիրք Նայկագեան լեզուի», Վենետիկ, 1837, էջ 200:

36 Վաղինակ վրդ. Մելոյեան, Մեր Տիրոջ եւ Փրկչին առակներու բացարրութիւնը, հր. Բ., Պէյրութ, 2010, էջ 140:

ասպրումային կամացն արար, զի ոչ սփռեաց եւ եր աղբարաց, զի արդարութիւն նորա մնացեալ էր յաղիւրեան»³⁷: Որոշ առակներում խոսվում է երկնային վարձարության մասին, եւ հիմնականում այդ խոսարումն է, որ մի շարք առակներ ի մի են բերվել եւ Եկեղեցում ընթերցվում են Մեծի Պահոց շրջանում: «Անիրավ փնտրեալ» այդ շարքում է «Տաք մնասների», «Անպարտ թգնում», «Տաք կույսերի», «Անառակ որդու», «Անիրավ դարավորի» առակների հետ միասին:

Նախ փորձենք հավաքարիւմ լինել փոքր, երկրային հանապազօրյա գործերում. «Որ ի փոքուն հաւարարիւմ է, եւ ի բազմին հաւարարիւմ է. եւ որ ի փոքուն՝ անիրաւ, եւ ի բազմին անիրաւ է» (Ղուկ. ԺԶ. 10): Սակավի մեջ հավաքարիւմ ծառայի վարձարության մասին խոսվում է նաեւ «Տաք մնասների» առակում. «Ազնին ծառայ եւ բարի, զի ի սակաւուդ հաւարարիւմ եղեր, լիցիս իշխանութիւն ունել քսան քաղաքի» (Ղուկ. ԺԹ. 17): Այս հարվածի մեկնության ժամանակ շարերը հիշում են Մարթայի Անարարանի հետեւյալ համարը. «Ի փոքուն հաւարարիւմ ես, ի վերայ բազմաց կացուցից գրեզ» (Մարթ. ԻԵ. 23): Նմանօրինակ գուգադրումներ քիչ չեն: Նշենք միայն առավել վաղ շրջանի հեղինակներից Իգնատիոս Սելեռնեցուն. «Ըստ որում գվարթարսն յանհաւարարիւմ լինելոյն դարել, ըստ նմին եւ գոտա՝ ի հաւարարիւմ լինելոյն պարտել: Անդ ասէ. «Եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւարարիւմ, զճմարիւրն եւ զձերն ձեզ ո՞հաւարասցէ» (Ղուկ. ԺԶ. 11): Իսկ աստ ասէ, զի՝ «Ի սակաւուդ հաւարարիւմ եղեր, լիցիս իշխան քսան քաղաքի» (հմնար. Ղուկ. ԺԹ. 17)»³⁸:

Նորկրակարանյան առակի կարեւոր առանձնահատկություններից է նաեւ այն, որ թեւեւ պարմությունը կարող է համեմվել քարաբնույթ դրվագներով, սակայն առակի հիմնական ուղերձը, ասելիքը՝ իբրեւ եզրահանգում, մնում է ամբողջական եւ պարզորոշ: Այսինքն՝ ի վերջո երկրորդական հանգամանքները դառնում են աստիճան, որով պէտք է բարձրանալ՝ առակի հիմնական գաղափարին հասնողաւու համար: Այս առակի պարագայում աստիճանն ուղեկցում է մեզ. «Եթէ օրարին չեղէք հաւարարիւմ, զձերն ո՞հասցէ ձեզ» (Ղուկ. ԺԶ. 12):

37 Մարթեոս Ջուղայեցի, նշվ. աշխ., թ. 26ա:

38 Իգնատիոս Սելեռնեցի, նշվ. աշխ., էջ 373:

РЕЗЮМЕ

Армянская экзегетическая школа одна из самых древних. Она прямая наследница Святоотеческой богословской мысли. До нас дошли в частности в жанре проповеди разносторонние Библейские толкование. Притча о “Неверном домоправителе” одна из самых труднопонимаемых частей Нового Завета которая стало причиной многих споров. В статье приводится отрывки из средневековых армянский толкователей, которые пытались раскрыть символическую сторону этой притчи.

SUMMARY

Armenian exegetical school one of the oldest. It is a direct heiress of Patristic theological thought. We were reached in particular genre versatile preaching Biblical interpretation. Parable of the “Unjust steward” one of the most difficult to understand parts of the New Testament which was the cause of many disputes. Article excerpts from medieval Armenian interpreters who tried to reveal the symbolic side of this parable.